

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Ազգային հաշիվներ

1.1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշ

2006թ. հունվար-փետրվարի ՀՆԱ ցուցանիշը

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) արտադրության ծավալն, ընթացիկ գներով, 2006թ. հունվար-փետրվարին կազմել է 164400.6 մլն.դրամ, իսկ իրական ծավալի ինդեքսը 2005թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 107.0%:

ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2006թ. հունվար-փետրվարին կազմել է 51067 դրամ (113.2 ԱՄՆ դոլար կամ 94.1 եվրո):

ՀՆԱ-ի արտադրությունը տնտեսության հիմնական բազային ճյուղերով

	Իրական ծավալի ինդեքսները նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ		ՀՆԱ-ի հավելածին նպաստման չափը (տոկոսային կետով)		ՀՆԱ-ի կառուցվածքը	
	Հունվար- փետրվար					
	2005	2006	2005	2006	2005	2006
<i>Ընդամենը, բազային ճյուղեր այդ թվում՝</i>	<i>105.4</i>	<i>103.9</i>	<i>3.7</i>	<i>2.7</i>	<i>68.4</i>	<i>65.9</i>
արդյունաբերություն	104.3	98.9	1.3	-0.3	31.8	27.3
գյուղատնտեսություն	100.9	102.7	0.1	0.2	9.3	9.3
շինարարություն	114.7	113.3	0.8	0.8	5.6	6.9
տրանսպորտ և կապ	109.5	112.9	0.7	0.8	6.3	7.0
առևտուր և հանրային սնունդ	105.4	107.8	0.8	1.2	15.4	15.4
Ընդամենը, այլ ճյուղեր	112.5	112.3	1.9	1.8	14.6	15.9
ՀՆԱ-ն հիմնական զներով	106.7	105.4	5.6	4.5	83.0	81.8
Ապրանքների (արտադրանքի) գուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	108.4	114.8	1.4	2.5	17.0	18.2
ՀՆԱ-ն շուկայական զներով	107.0	107.0	7.0	7.0	100.0	100.0

Արտադրված ՀՆԱ-ի կառուցվածքը

	Հունվար- փետրվար	
	2005	2006
Համախառն ներքին արդյունք	100	100
ապրանքներ	46.8	43.7
ծառայություններ	36.2	38.1
ապրանքների (արտադրանքի) գուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	17.0	18.2